

րից, ալնպէս կը կերպարանալիս-
ւին, ինչպէս փոխւեց թլօր Դաւի-
թը՝ խմելով իւր հօր «կաթնաղբիւ-
րից»:

Մէկ սհաթ քնաւ, էլաւ
Տեսաւ էնպէսն ի լցւի
էնպէսն ի խաստացի,
էնպէսն ի զօրութիւն, ոգժ առի,
Որ չափաւամիշ ի եղի:

Այսպէս ուրեմն, պ. Աբեղեանի
հրատարակած «Դաւիթ և Մհեր» ժողո-

վերդական դիցազնական վէպը, չը
նալած իւր թերատութեան, մի շատ
նշանաւոր երևոյթ է մեր գրականու-
թեան մէջ և ցանկալի է, որ այսու-
հետև ոչ թէ պատահական կերպով
անլապտութիւնից լոյս աշխարհ ընկ-
նէին մեր ժողովրդի փառաւոր դի-
ցազներգութեան բեկորները, ալ
կազմակերպւած հետազօտութեան և
ուսումնասիրութեան արդիւնք լի-
նէին նոքա:

Լ. Ս.

ՌՈՒՇԱՆ և ՀԻՌԻՋԱՒ, վէպ (Ղարաբաղի անցեալից). հեղինակու-
թիւն ՄԻՐՋԱ ՏԷՐ-ՍԱՐԳՍԵԱՆՑԻ. տպ. Մ. Մահտեսի-Յակոբեանցի,
Շուշի, 1889 թ., քառածալ, Գ+148 էրես, տառ № 12, գինն է 40 կ.:



Պ. Միրզա Տէր-Սարգսեանցի
վէպը, որպէս հեղինակը մէկ լառա-
ջաբանով լատնում է ընթերցողին,
պատմական վէպ է: Համառօտակի
պատմեմք վէպի բովանդակութիւնը:

Լինում է չի լինում Ղարաբաղում
մէկ Մ. գիւղ. այդ գիւղի մէջ ևս լի-
նում են մէկ երիտասարդ՝ Ռուշան
անունով և մէկ աղջիկ՝ Հիրիդադ
անունով. այդ երկուսը միմեանց սի-
րում են: Ղարաբաղի խաները սո-
վորութիւն են ունեցել տարին մէկ
անգամ հալ գիւղերից գեղեցիկ աղ-
ջիկ ընտրել և բռնութեամբ տանել
իրանց հարեմը: Ղարաբաղի խանը
մարդիկ է ուղարկում Հիրիդադին
հարեմը բերելու. Ռուշանը իւր հա-
մագիւղացի մէկ քանի երիտասարդ-
ներով վարձակւելով Հիրիդադին խա-
նի մօտ տանող թուրքերի վերայ՝ նո-

ցա սպանում են և Հիրիդադին ա-
ղատում: Խանը բարկանում է այդ
դէպքի վերաջ և Մ. գիւղը քարուքանդ
անում, գիւղացիներին քաւականին
մարդիկ սպանում: Վերջ ի վերջոյ Հի-
րիդադը բռնւելով ընկնում է խանի
հարեմը, բայց չը կամենալով մահմե-
դական լինել և խանի կամքը կա-
տարել, մանաւանդ թէ իւր սիրե-
ցեալի երգի ձայնը լսելով, ապարան-
քի բարձրութիւնից իրան ցած է
ձգում Ռուշանի շոտներին տակ ու մեռ-
նում, ուր և Ռուշանն ևս անձնապ-
պանութեամբ վերջ է տալիս իւր
կեանքին:

Ինչպէս լատնի է, պատմական
վէպ գրել շատ անգամ չէ լաջողում
նոյն խի տաղանդաւոր վիպասաննե-
րին, որովհետև այդ տեղ, բացի տա-
ղանդից, վիպասանը պէտք է ուսում-

նասիրած լինի և գիտենալ նկարագրած ժամանակի անցքերը, երկրի տեղագրութիւնը, նոյն ժամանակի ժողովրդի սովորութիւնները, նորա զարգացման չափը, կենցաղավարութիւնը, արդ ու զարդը և որ գլխաւորն է՝ վիպասանը պէտք է ճանաչէ ալդ պատմական շրջանի մարդու հոգեբանական կողմը և ալն և ալն: Եւ որովհետեւ փշեալ պատմանները պ. Միրզա Տէր-Սարգսեանցի համար գոյութիւն չ'ունին, պատմական վէպ գրելը ուրեմն և գիրքին է: Հեղինակը, իւր գրածքի մէջ մտցնելով մէկ քանի շատ սովորական պարսկական անուններ, ինչպէս է՝ իւրաքաչի, աղսախկալ, գիշքիրասի, խան, կարծում է, ալն է պատմական վէպ եղաւ. նա չի էլ որոշում վէպի մէջ նկարագրած անցքի ժամանակը: Այն գիւղի անունը, որտեղ կատարւում է ամբողջ վէպը՝ պ. Միրզա Տէր-Սարգսեանցը Մ. տառով է նշանակում, փոխանակ կամ գիւղի իսկական անունը նշանակելու կամ՝ եթէ չը գիտէր, որ և հաւանական է, Ղարաբաղի գիւղերից մէկի անունը դնէր: Նկարագրելով Ղարաբաղի խանի բռնութիւնները, նորա ապարանքը՝ հեղինակը չէ պատշաճում որ քաղաքում կամ որ գիւղումն էր նստում ալդ խանը. չէ որ Ղարաբաղը մէկ երկրի անուն է, և ոչ մէկ քաղաքի կամ գիւղի. նոյն իսկ ալդ խանի (որ վէպի գլխաւոր շարժառիթն է) անունը նշանակած է Շ տառով:

Ռուշան և Հիւրիդադ վէպը ոչ միայն պատմական չէ, այլ և ժամանակակից չէ. դա «ոչ հալի խոնկ է և ոչ թուրքի ուզաուլուկ», այսինքն՝ մէկ

անդունդ, անընական և աղէտ գրածք է, որտեղ Ղարաբաղի պատմական գիւղացիք ճամարտակում են ալթման լրագրական գաղափարներով և բառերով և ալդ ճամարտակութիւնները բռնում են գրքի կէս մասը: «Ռուշանը հասկանում էր թէ ինչ ասել է ամուսնութիւն, ինչ ասել է ընտանիք. նա (Ռուշանը) ատում և պախարակում էր ուրիշներին, որ գլուխները կախ գցած, անբան կենդանու նման կապը բռնած տարւում էին աղջկալ տուն և նշանւում: Շատ տղերք էլ իրանց տանը մնում էին նստած և քահանան ու ծնողները մատանին տանում էին աղջկալ տունը: Ի՞նչ դաղափար կարող էին ունենալ ալդպիսի տղաք ամուսնութեան վերաբ...» (Այտերն հեղինակի դրածն է. երեւի դորանով մէկ գաղտնիք է կամենում հասկացնել): Մէկ ուրիշ տեղ. «Ռուշանը ոչ թէ ցափշտակուած էր Հիւրիդադի հարբստութեամբ կամ ճոխ օժիտով, ինչպէս լինում են շատերը (ալդ Թրք և որտեղ), այլ սիրում էր ապագայում խաղաղ ընտանիքի համեստ անդամներ լինելու նպատակով— ամուսնանալու նպատակով»: Հեղինակի գրչի տակ Ղարաբաղի պատմական գիւղացիք միմեանց հետ դուռքով են խօսում, ինչպէս Ռուշանի քեռի Թհանը և իւրաքաչի Սարգիսը:

Հարկաւոր է նկատել, որ վէպի բոլոր անձնաւորութիւնները՝ սկսած հերոսից և հերոսուհուց՝ որոշ բնավորութեան տիպարներ չեն, այլ հեղինակի քմաց համաձայն պատահական, չիճծու խրտուխլաներ են, որոնք

իրանց դատողութեան ձևով և գործերով նման են աւելի արժանան քաղաքակրթութեան աղղեցութեան ներքու բարոյապէս փչացած քաղաքացոյց, քան թէ Ղարաբաղի պատմական գիւղացոյց. արդպէս են Ռուշանի քեռի Օհանը, իւղբաշի Սարգիսը, Ռուշանի մալըր, Խաթալի պառաւը. ինչ ասել կուզի, որ հեղինակը չէ բացատրում թէ ինչո՞ւ արդ մարդիկ բարոյապէս փչացած են. ինչ հիման վերաջ Ռուշանի մալըր մէկ կոշտ ու կոպիտ, զգացում և գուլթ չ'ունեցող գիւղացի կ'լին է, իսկ ճորա որդի Ռուշանը՝ սեւած ու մեծացած ճոյն գիւղական շրջանումը՝ 19-րդ դարու լրագրական լեզուով ճամբարտակող մէկ երիտասարդ է. և վերջապէս ինչ պատմական փաստի վերաջ հիմնւելով հեղինակը մէկ խեղճ գիւղացի կնոջ բերան է դնում օժիտի մասին արձախի խօսքեր, որոնք չատուկ են Տփլիսի մօցիքուլներին. Հաջ գիւղացին, լինի նա ար թէ կ'ին, ոչ միայն անցեալում, այլ և ներկայումս՝ իրան սահմանափակ գլխով, նախապաշարումներով և աւանդական սովորութիւններով հանդերձ՝ աւելի ճիշդ և բարոյական գաղափար ունի ամուսնութեան վերաջ թէ տնտեսական և թէ գեղեցկութեան ճաշակի կողմից, քան թէ պ. Միրզա Տէր-Սարգսեանցը մեզ ներկայացնում է. Յայտնի է, որ տղայի

տէրն է աղջկա տիրոջը բաշլղ տալիս, որ լինում է ձի, ոչխար, շոր և այլն, որովհետեւ աղջիկը հարս գնալով՝ փեսայի տանը մէկ գլխաւոր աշխատաւոր ձեռք է աւելանում. ուրեմն ինքն ըստ ինքեան շատ հասկանալի է, որ Ռուշանի մալըր չէր կարող ցանկանալ որ իւղբաշու «փմար, գիժ, խեղազար և տգեղ» աղջիկը իւր հարսն լինի, և վերջապէս ճրմալը կը ցանկալարդիսի չատկութիւնների տէր հարսն ունենալ. Գիւղացու ամուսնութեան համար անհրաժեշտ պայմաններից մէկն է և կնոջ գեղեցկութիւնը. մանաւանդ իւր հարսի գեղեցկութեանը բծախնդիր է փեսայի մալըր. Հաջ գիւղերում և մինչև անգամ քաղաքներում որ և իցէ կերպով մալըր չի համաձայնիլ, որ իւր տղայի կ'ինը տգեղ լինի. Ժողովուրդը տղալ ունեցող մօրը բարեմաղթութիւններ արած ժամանակ, կամենալով նորա սրտին և հոգուն մօտ բարիք ցանկալ, ասում է. Աստուած քեզ մի սիրուն և հնազանդ հարսի տէր անէ. Այդ է հաջ մօր իւր որդու համար նորա մանկութիւնից փայփայած իդէալներից մէկը. իսկ պ. Միրզա Տէր-Սարգսեանցն իւր թքով կպցրած և կխաղբարգէտ վէպով կամենում է ապացուցանել, որ Ղարաբաղի Մ. գիւղում հակառակն է եղել.

Մ. Աս.